# <u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> <u>N 2</u>

**ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով «ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/[illegible]3» ծածկագրով գրասենյակային գույքի /կահույքի/» ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք.Նոր Հաճն — 12 դեկտեմբեր 2025թ.- 18 դեկտեմբեր 2025թ.

**2025թ. Դեկտեմբերի 12 -ից դեկտեմբերի 18-ը, Կոտայքի մարզ,Նոր Հաճն քաղաքի, Չարենցի փողոց 20 հասցեում գտնվող «Նոր Հաճնի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում** տեղի ունեցավ **գրասենյակային գույքի /կահույքի/»** ձեռքբերման նպատակով **«ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/[illegible]3»** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

*Մասնակցում էին՝ Հանձնաժողովի նախագահ՝ Հրաչիկ Աղաջանյան*
*հանձնաժողովի անդամներ՝ Մանուշակ Պողոսյան*
*Կարեն Խեչոյան*
*քարտուղար՝ Ք.Բաղդասարյան*

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է 3 անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները,հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գնի մասին:
3.Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4.Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների,ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5.Ընթացակարգի ընտրված մասնակցին հայտարարելու մասին:
6.Կատարված հարցումների,պարզաբանումների,հիմնավորումների և իրավերում կատարված փոփոխությունների,հակաօրինական գործողությունների,ներկայացված բողոքների մասին:
7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:
Կողմ՝ 3,դեմ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ԳՆԻ ՄԱՍԻՆ

**2.1** 2025թ. Դեկտեմբերի 12-ին կայացած նիստում, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Ապրանքի անվանումը | Չափաբաժնի ընդհանուր գնման գինը |
|---|---|---|
| *1* | *Ուսուցչի սեղան* | *275 000* |
| *2* | *Գրապահարան* | *980 000* |
| *3* | *Գրատախտակ՝ ծալովի* | *95 000* |
| *4* | *Աշխատանքային աթոռ* | *96000* |
| *5* | *Ղեկավարի աթոռ* | *150 000* |
| *6* | *Զգեստապահարան* | *130 000* |

**2.2** «ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/[illegible]3» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացումը նախատեսված էր թղթային եղանակով, հայտերը ներկայացվել են հրավերով սահմանված օրը և ժամին:

**2.3** Հանձնաժողովը որոշեց Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
Կողմ՝ 3,դեմ՝ 0:

## 3. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ,ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ,ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել, պարզաբանումներ չեն տրամադրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3,դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**4.1 «ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/ 3»** ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցներ/.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հասցե,հեռ. | Էլ.փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1. | «ՄԱՐԹԱ» ՍՊԸ | Չարենցավան համայնք, Բջնի ,5-րդ փողոց 1-ին փակուղի 094-31-31-44 | yasha-sahakyan@mail.ru | 03024588 |
| 2. | «ԴԱՄԿԱՐ» ՍՊԸ | գյուղ Արգավանդ, Սուրբ Սարգիս ½ 043-43-43-42 | damkar777@mail.ru | 04428836 |
| 3. | «ԼԵՎԱՆ» ՍՊԸ | Արմավիր, Մեքենագործների փողոց, 1-ին շենք, բն.8 044604066 | levanllc@mail.ru | 04726417 |
| 4. | «ՆԱՐՎԱԿԻ» ՍՊԸ | Ք.Արտաշատ, Մռավյանի 6 043-404-444 | marine.@inbox.ru | 04217272 |
| 5. | «Հ. ՍՄԲԱՏ» ՍՊԸ | Արարատի մարզ,գ.Բուրաստան 093433713 099433713 | h.s2013@mail.ru | 04218395 |

4 ա.Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը՝ սահմանված կարգին

- Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

բ . բացված ծրարում պահանջվող /նախատեսված / փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

գ. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

## 5. «ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/ 3» ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց

5.1 Բավարար գնահատել մասնակիցների ներկայացված հայտերը

Կողմ՝ 3,դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ,ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**6.1 «ՆՀ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/ 3»** ծածկագրով գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով առաջարկված, հիմք ընդունելով տառերով գրվածները:

| N | Ապրանքատեսակ | Գնման գին | «ՄԱՐԹԱ» ՍՊԸ | «ԴԱՄԿԱՐ» ՍՊԸ | «ԼԵՎԱՆ» ՍՊԸ | «ՆԱՐՎԱԿԻ» ՍՊԸ | «Հ. ՍՄԲԱՏՑ» ՍՊԸ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ուսուցչի սեղան | 275 000 | 210000 | 220000 | ---------- | 202810* | 245000 |
| 2 | Գրապահարան | 980 000 | 868000 | 676250* | ---------- | 796800 | 910000 |
| 3 | Գրատախտակ՝ ծալվող | 95 000 | --------- | -------- | ---------- | 68350* | 75000 |
| 4 | Աշխատանքային աթոռ | 96000 | --------- | -------- | --------- | 77500* | 87000 |
| 5 | Ղեկավարի աթոռ | 150 000 | --------- | 45000* | 105000 | 100000 | 145000 |
| 6 | Զգեստապահարան | 130 000 | 122000 | 100000 | ------- | 97200* | 126000 |

**7. «ՆՅ1ՀԴ-ԳՀԱՊՁԲ-2025/ 3» ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց**

**7.1** Ընթացակարգի 1-ին , 3 –րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել **«ՆԱՐՎԱԿԻ» ՍՊԸ-ին,** որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

**7.2** Ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել **«ԴԱՄԿԱՐ» ՍՊԸ-ին,** որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Կողմ՝ 3,դեմ՝ 0:

7,3 Գնահատող հանձնաժողովի քարտուղարին

ա/Արդյունքների ամփոփման նիստի ավարտից հետո ,ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը արդյունքների ամփոփման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված /սկանավորված/ տարբերակը հրապարակել տեղեկագրում:

բ/ Տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

գ/ Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին , Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել որակավորման ապահովում միակողմանի հայտարարված տուժանքի /Հավելված 4.2/ ձևով գնման գնի 15 տոկոսի չափով և պայմանագրի ապահովում /Հավելված 5.1/ ձևով գնման գնի 10 տոկոսի չափով :

Կողմ՝ 3,դեմ՝ 0:

8.Գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամների անունները , ազգանունները և ստորագրությունները՝

**Հանձնաժողովի նախագահ՝** ---------------------- **Հրաչիկ Աղաջանյան**

**անդամներ՝** ---------------------- **Մանուշակ Պողոսյան**

---------------------- **Կարեն Խեչոյան**

**քարտուղար՝** ---------------------- **Ք.Բաղդասարյան**